


ԱՄՆ-Տալիբան հարաբերությունների բարդ դինամիկան 1996-2001 թթ.

Մաթևոսյան Հարություն Ա.

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, ասպիրանտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0006-2840-8245>
harutyun.matevosyan@edu.isec.am

ՀՏԳ՝ 94(5); EDN: QLRISQ

DOI: 10.58587/18292437-2024.4-28

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Աֆղանստան, Միացյալ Նահանգներ, Տալիբան, քաղաքացիական պատերազմ, իսլամ, Ահմեդ Շահ, տալիբանություն, ՆԱՏՕ

Сложная динамика отношений США и Талибана в 1996-2001 гг.

Матевосян Арутюн А.

Аспирант, Институт Востоковедения НАН РА (Ереван, РА)

Аннотация. Афганская гражданская война вступила в новую, более интраафганскую фазу после окончания Холодной войны. Конфликт, который ранее был геополитической борьбой между двумя крупными державами, трансформировался в интраафганский конфликт, в котором Талибан, террористическая организация, возникшая в ходе афганской войны, заняла ведущую роль. Начиная с начала 1990-х годов, Талибан начал приобретать значительный авторитет в афганских кругах и предпринял практические шаги для консолидации власти в Афганистане. С захватом Кабула был заложен фундамент для правления режима Талибан, который изначально рассматривался американскими властями как внутреннее дело Афганистана. Однако это терпимое отношение не длилось долго, так как Талибан предоставил укрытие различным террористическим группам, особенно аль-Каиде и её лидеру Осаме бин Ладену. Международное сообщество вскоре начало осознавать угрозу, исходящую от поддержки терроризма со стороны Талибана. Были усилены дипломатические усилия по изоляции режима Талибан и давлению на него, чтобы разорвать связи с экстремистскими группами. Несмотря на эти усилия, упорство Талибана привело к растущему международному осуждению и в конечном итоге создало условия для более прямого вмешательства зарубежных держав, что значительно сказалось на стабильности региона и глобальной безопасности.

Ключевые слова и словосочетания: Афганистан, США, Талибан, гражданская война, ислам, Ахмед Шах, терроризм, НАТО

The Complex Dynamics of U.S.-Taliban Relations 1996-2001

Matevosyan Harutun A.

NAS RA, Institute of Oriental studies, PHD student (Yerevan, RA)

Abstract. The Afghan civil war entered a new, more intra-Afghan phase after the end of the Cold War. The conflict, which had previously been a geopolitical struggle between two major powers, shifted to an intra-Afghan conflict in which the Taliban, a terrorist organization that emerged during the Afghan war, took a leading role. Starting in the early 1990s, the Taliban began to gain significant prestige in Afghan circles and took practical steps to consolidate power in Afghanistan. With the capture of Kabul, the foundation was laid for the rule of the Taliban regime, which was initially regarded by American authorities as an internal matter for Afghanistan. However, this tolerant attitude did not last long, as the Taliban provided shelter to various terrorist groups, particularly al-Qaeda and its leader Osama bin Laden. The international community soon began to recognize the threat posed by the Taliban's support for terrorism. Diplomatic efforts were intensified to isolate the Taliban regime and pressure it to sever ties with extremist groups. Despite these efforts, the Taliban's intransigence led to increasing international condemnation and ultimately set the stage for a more direct intervention by foreign powers, which significantly impacted the region's stability and global security dynamics.

Keywords & phrases: Afghanistan, USA, Taliban, civil war, Islam, Ahmed Shah, terrorism, NATO

1989 թվականին խորհրդային զորքերի դուրսբերումից հետո Աֆղանստանը վերածվեց դաժան քաղաքացիական պատերազմի թատերաբեմի մոջահեդների խմբավորումների և ռազմական առաջնորդների միջև: Տարբեր խմբավորումների հաջողվում էր ժամանակ առ ժամանակ գրավել մի քանի շրջաններ, այնուամենայնիվ, որևէ խմբավորման այդպես էլ չհաջողվեց

պահպանել իրենց տիրապետումը երկրի ողջ տարածքում: Տալիբները, որոնք առաջացել են Պակիստանի մեդրեսեներից, Աֆղանստանի քաղաքացիական պատերազմից և Պակիստանում փախստականների ճամբարներից, 1994 թ.-ին գրավեցին Քանդահարը՝ օգտագործելով հակառակորդ խմբերի միջև եղած տարաձայնությունները և աջակցություն ունենալով Պակիստանի

հատուկ ծառայությունների կողմից [1]: Տալիբան անունը գալիս է արաբական «տուլաբ» հոգնակի ձևից, այսինքն մուսուլմանական կրոնական դպրոցի սան: Այս կրոնաքաղաքական շարժման անդամների մեծ մասը, հատկապես սկզբնական շրջանում, Պակիստանի մեդրեսեների շրջանավարտներ էին: Տալիբանի ի հայտ գալը որպես ձևավորված քաղաքական ուժ 90-ականների սկզբին առաջացել է Պակիստանի անվտանգության գործակալությունների կողմից՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետախուզական գործակալությունների աջակցությամբ: Իսկզբանե Պակիստանը և նրա արևմտյան դաշնակիցները հույս ունեին տալիբներին օգտագործել որպես գործիք իրենց նպատակներին հասնելու համար, որոնցից առաջնայինը գահընկեց արված Չահիր շահի միապետության վերացումը և հին իշխանության վերականգնումն էր, այսինքն, Արևմուտքին հավատարիմ ռեժիմի ստեղծումը: Դաշնակիցները հավակնոտ ծրագրեր ունեին՝ կապված Աֆղանստանի տարածքի և ռեսուրսների օգտագործման հետ՝ էներգառեսուրսների լայնածավալ նախագծեր իրականացնելու նպատակով: Առաջին անգամ ի հայտ գալով 1993 թվականին՝ տալիբները շարունակաբար ցույց էին տալիս, որ իրենք ոչ միայն ռազմական, այլ նաև քաղաքական առումով կայացած ուժ են հանդես գալիս:

Տալիբանի մասին ավելի լայն պատկերացում ստանալու համար նախևառաջ պետք է նշել, որ անդամների մեծամասնությունը փուլ-թուներ են, որոնք կազմում են Աֆղանստանի բնակչության ավելի քան 42% [2, էջ 5]: Փուլ-թուների քաղաքական և բարոյական գլխավոր կողերը կարելի է ձևակերպել հետևյալ բաղադրիչներով՝

- Պաշտպանել սեփական պատիվը, ինչպես նաև ընտանիքի, կրոնի և մշակույթի հեղինակությունը
- Աներկբայորեն հավատալ Աստծուն
- Վրեժխնդիր լինել ցանկացած ռոտնձգության և չարության համար անգամ այն պարագայում, երբ այն իրականացնում է քո ընկերը կամ արյունակից բարեկամը
- Պաշտպանել հայրենիքը և սեփականությունը օտարներից, թշնամիներից և այլն [3]:

Տալիբան շարժումը համաժողովրդական աջակցություն ստացել էր դեռ հետխորհրդային շրջանում՝ խոստանալով պարտադրել կայունություն և օրենքի գերակայություն մրցակից մոջահեդների խմբերի միջև ավելի քան քառամյա արյունալի հակամարտությունից հետո (1992–1996): Տալիբները ներխուժեցին Քանդահար 1994 թվականի նոյեմբերին՝ խաղաղեցնելու հանցագործություններով լի հարավային քաղաքը, և մինչև 1996 թվականի սեպտեմբերը գրավեցին մայրաքաղաք Քարուլը նախագահ Բուրհա-

նուդդին Ռաբանիից, ով էթնիկ տաջիկ էր, ում համարում էին հակափուլ-թուն և կոռումպացված: Վերլուծաբաններն այնպես են, որ մինչև 2001թ.-ը տալիբների ռեժիմը վերահսկում էր երկրի մոտ 90 տոկոսը [4, էջ 7]: Արդեն կարճ ժամանակ անց նրանց հաջողվեց պարտադրել իրենց տիրապետությունը՝ համախմբելով տարածքային ամբողջ վերահսկողությունը:

Տալիբանի կառավարման մոդելը և մեթոդներ վերցված էին փուլ-թուների նախախլամական ցեղային օրենքներից և շարիաթի մեկնաբանություններից, որոնք գունավորված էին մեդրեսեների խիստ վահաբական դոկտրիններով: Տալիբանը անտեսում էր պետական հիմնական գործառույթները, ինչպիսիք էին սոցիալական ծառայությունները և այլն: Տալիբները պայքարում էին այսպես կոչված ոչ իսլամականի դեմ՝ պահանջելով կանանց կրել ոտքից գլուխ բուրկա կամ հիջաբ, արգելել երաժշտությունը և հեռուստատեսությունը, ինչպես նաև բանտարկել այն տղամարդկանց, ում մորուքը շատ կարճ էր թվում:

1990-ականների կեսերին մոջահեդների և ձախականների ռեժիմի կողմնակիցների միջև շարունակվող բախումների պայմաններում Տալիբան շարժումը վերահսկողության տակ վերցրեց երկրի մոտ 90%-ը: Շուտով դիմադրության միակ կիզակետը հյուսիսային նահանգներն էին, որոնք վերահսկվում էին Հյուսիսային դաշինքի կողմից՝ գորավար Ահմադ Շահ Մասուդի (1953-2001) հրամանատարությամբ: 1997-1998 թթ դաժան մարտեր սկսվեցին Մազարի Շարիֆ քաղաքի համար, որը Հյուսիսային դաշինքի հենակետն էր և ռազմավարական կետ դեպի Փանջշիր կիրճ՝ մոջահեդների դիմադրության հենակետը: 1997 թվականի մայիսին քաղաքային միջավայրում կռվելու փորձ չունեցող տալիբները պարտություն կրեցին, սակայն 15 ամիս անց նրանք կարողացան հաջողության հասնել՝ դաժան հաշվեհարդար տեսնելով հազարավոր խաղաղ բնակիչների նկատմամբ: Նոր իրադրության պայմաններում Հյուսիսային դաշինքի թիկունքում մնաց միայն Փանջշիրի կիրճը: Ըստ երևույթին, 1996 թ.-ից Աֆղանստանում իշխանությունը անցավ Տալիբանին, որով հակամարտությունը տեղափոխվեց ավելի ծայրահեղ և լարված փուլ:

Աֆղանստանում տալիբների արագ հաջողության հիմնական գործոններից մեկը Պակիստանի հատուկ ծառայությունների աջակցությունն էր: Հիմնականում նրանք էին տալիբներին մատակարարում զինամթերք, վառելիք և պարեն: Պակիստանի միջժառայության հետախուզության վարչությունը օգտագործում էր մասնավոր հատվածի տրանսպորտային ընկերությունները՝ Տալիբանին մատակարարումներ սպահովելու համար: Այս ամենի իրականացման

նպատակներից մեկն էլ Տալիբանի կողմից կառավարվող տարածքները ահաբեկչական խմբավորումների ապաստարան դարձնելն էր: Դրա վառ ապացույցն Ուսամա բեն Լադենի երկարաժամկետ ներկայությունն էր Աֆղանստանում մինչ տալիբների կողմից Քաբուլը գրավելը [5]: Համաձայն 9/11 հանձնաժողովի գեկույցի, երբ բեն Լադենը առաջին անգամ վերադարձավ Աֆղանստան 1996թ. մայիսին, նա կապեր էր պահպանում Գյուլբադին Հեքմետյարի հետ [6, էջեր 63-65]: Այնուամենայնիվ, մինչև 1996 թվականի սեպտեմբերին, երբ Չալալաբադը և Քաբուլը ընկան տալիբների ձեռքը, բեն Լադենը ամրապնդեց իր կապերը տալիբների հետ և գործում էր Աֆղանստանի տալիբների կողմից վերահսկվող տարածքներում:

Տալիբանի իշխանության գալը դե ֆակտո բերեց թե ներքին և թե արտաքին քաղաքականության կտրուկ փոփոխությունների, որոնք մեծապես ազդեցին Աֆղանստանում ապրող ժողովրդի վրա: Քաբուլի գրավումից հետո Աֆղանստանում տալիբների կողմից հաստատված քաղաքական ռեժիմը դարձավ նրանց քաղաքական-կրոնական գաղափարախոսության ծրագրերի մարմնավորումը ծայրահեղ իսլամիստական տարբերակով: Երկրի ողջ օրենսդրական դաշտը, քաղաքական ու հասարակական կյանքը հիմնված էր շարիաթի օրենքների և մոլլաների հրամանների վրա: Պատերազմներից ավերված երկրի տնտեսությունը խոր անկման փուլում էր: Տալիբների կողմից իշխանության գալուց անմիջապես հետո նրանց իշխանությունը ճանաչվեց միայն Պակիստանի և Սաուդյան Արաբիայի կողմից: Հետագայում Արաբական Միացյալ Էմիրությունները նույնպես հարաբերություններ հաստատեց տալիբների ռեժիմի հետ: Միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու ցանկությունը Տալիբանի առաջնային քաղաքական նպատակներից մեկն էր:

Տալիբները, գրավելով Քաբուլը, անմիջապես պահանջեցին այլ պետություններից ճանաչել իրենց որպես Աֆղանստանի կառավարություն, և Աֆղանստանի նստավայրը՝ Գլխավոր ասամբլեայում: Նրանք, սակայն, ոչ մեկը և ոչ էլ մյուսը չստացան: Տալիբների իշխանության նկատմամբ անվստահելի դիրքորոշման ձևավորման պատճառները ստեղծվել էին դեռևս ռազմական գործողությունների ընթացքում և հատկապես այն ժամանակ, երբ տալիբները գրավել էին Քաբուլը 1996 թվականի սեպտեմբերի 26-27-ին և նախկին կոմունիստ նախագահ Նաջիբուլլահին քարշ տվեցին ՄԱԿ-ի շենքից (որտեղ նա ապրում էր 1992 թվականի ապրիլից) և սպանեցին՝ նրա մարմինը կախելով Արիանա հրապարակում գտնվող հենասյունից [7]: Այս սարսափելի տեսարանը գրավեց միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչների ուշադրու-

թյունը, որոնք այն ժամանակ մշտապես պահանջում էին խիստ սահմանափակումներ չկիրառել Քաբուլի խաղաղ բնակչության դեմ: Արևմտյան պետությունների արձագանքը այս իրադարձությանը ծայրահեղ անբարենպաստ էր: Արդյունքում, այնպիսի պետություններ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Միացյալ Թագավորությունը և Ավստրալիան, որտեղ Ռաբանիի կառավարությունն ուներ դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալներ, առաջին հերթին նախընտրեցին աջակցել նախկին ստատուս-քվոյի պահպանմանը [8]:

Տալիբանի երկրորդ արտաքին քաղաքական նպատակը միջազգային աղբյուրներից ֆինանսական եկամուտներ ձեռք բերելն էր: Աֆղանստանը, մինչև 1978 թվականի կոմունիստական հեղաշրջումը, ուներ ռենտիեր պետության շատ բնութագրեր (հեղաշրջման ժամանակ պետական ընդհանուր ծախսերի ավելի քան մեկ երրորդը ֆինանսավորվում էր արտաքին օգնության միջոցով): Այն ժամանակ, երբ տալիբները գրավեցին Քաբուլը, փաստացի ոչնչացրեցին հարկերը բարձրացնելու կենտրոնական պետության կարողությունը: Ուստի, ռեժիմի հիմնական նպատակը դարձավ արտաքին ֆինանսական աջակցություն ստանալը և հենց այդ շրջանակներում Սաուդյան Արաբիան դիտարկվում էր որպես «գլխավոր ֆինանսական դոնոր»: Այնուամենայնիվ, սաուդցիները, վերլուծելով, թե տարբեր ժամանակներում որքան անարդյունավետ էր մոջահեդներին աջակցություն ցուցաբերելը, փորձում էին մասնակիորեն իրականացնել ֆինանսական աջակցության իրենց գործառույթները և տալիբներին չէր մնում այլընտրանք քան դիվերսիֆիկացնել իրենց եկամտի աղբյուրները, որոնք ևս հակասական արդյունքներ տվեցին:

Տալիբները մեծ հույսեր ունեին նաև Միացյալ Նահանգների աջակցությունը ունենալու համար: Ավելին, 1995 թ. հոկտեմբերին Պակիստանում ԱՄՆ դեսպանի կողմից գեներալ Նասիրուլլահ Բաբարիի բեռնատարների շարաայունով ուղեկցումը դեպի Աֆղանստան մեկնաբանվեց որպես հակընդդեմ քայլ Ռաբբանիի կառավարության դեմ: Պակիստանում ԱՄՆ դեսպանատան աշխատակիցները չէին թաքցնում իրենց հակակրանքը տալիբների նախորդների նկատմամբ, և Հարավային Ասիայի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ռոբին Ռաֆելը նույնիսկ պահանջ հնչեցրեց, որպեսզի Իրանը «դադարեցնի Քաբուլի մատակարարումը» [9]: Արտաքին քաղաքականության առաջնահերթությունը ենթարկվելով առևտրային շահերին՝ ԱՄՆ վարչակազմը աջակցում էր նաև UNOCAL-ի¹ հավակնություններին տարածաշրջանի

¹ Կալիֆորնիայի Union Oil Company-ն և նրա հողինգը Unocal Corporation-ը, որոնք միասին հայտնի են որպես Unocal եղել են նավթի խոշոր հետազոտող և շուկայագետ 19-րդ

նկատմամբ: Պետքարտուղարության խոսնակի պաշտոնակատար Գլին Դեյվիսը նշում էր, որ «Միացյալ Նահանգները ոչ մի վիճելի բան չի գտնում նոր կառավարության քաղաքական հայտարարություններում, ներառյալ իսրայելական օրենքը պարտադրելու նրա քայլը» [10]: Այս ընթացքում ամերիկյան գործիչների շրջանում կար համընդհանուր պատկերացում այն մասին, որ Տալիբանը կարծես թե հրաժարվել է ապաստան տրամադրելու ալ-Կաիդային, նույնիսկ պնդում էին, որ Ուսամա բեն Լադենի հեռանալը հակաամերիկյան ֆինանսավորող ահաբեկչական խմբավորումներից վկայում են ԱՄՆ-ի և տալիբների միջև որոշակի ընդհանուր շահերի մասին [11, էջ 335]: Սակայն իրականությունը լիովին այլ էր և շուտով պարզ դարձավ, որ բեն Լադենը ոչ միայն չի լքել Աֆղանստանը, այլ ընդհակառակը, նա եղել է Քարուլում տալիբների հիմնական ֆինանսավորողներից մեկը [12, էջ 641]: Արդյունքում, 1998 թվականի օգոստոսի 7-ին տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները, որոնք ավերեցին ԱՄՆ դեսպանատները Քենիայում և Տանզանիայում, ստիպեցին ԱՄՆ պաշտոնյաներին մեղադրել Բեն Լադենին և ալ-Կաիդային այս ահաբեկչական գործողությունները կազմակերպելու համար, ինչի պատասխանը եղավ երկու շաբաթ անց, երբ Աֆղանստանում ալ-Կաիդա-ի ուսումնական ճամբարները հավասարվեցին հողին Tomahawk հրթիռներով: Այս ամենը հանգեցրեց հակաամերիկյան տրամադրությունների անին տալիբների և նրանց պակիստանցի աջակիցների կողմից, ինչը բերեց նախագահ Բիլ Քլինթոնի կողմից 1999 թ. ԱՄՆ-ի և տալիբների միջև առևտրային և ֆինանսական կապերի խզմանը: Երբ տալիբների հետ հարաբերությունները սառեցվեցին, Վաշինգտոնը սկսեց հակվել այն մտքին, որ Աֆղանստանի նախկին միապետ Չահիր Շահը կարող է դեր խաղալ այլընտրանք ստեղծելու գործում, ինչը դրդեց Պակիստանի այդ ժամանակի արտգործնախարարին, որը տալիբների եռանդուն կողմնակիցն էր, 1998 թվականի մարտին հայտարարել, որ ամերիկացիները «մտածում են Աֆղանստանում խամանիկներ դնելու մասին» [13]:

Այնուամենայնիվ, տալիբների և ամերիկացիների հարաբերությունները սկզբնական շրջանում չէր դիտարկվում որպես լարված և պայթյունավտանգ, սակայն ահաբեկիչների կողմից իրականացված գործողությունները ուղղակիորեն այլընտրանք չէին թողնում, քան անցնել պատժամիջոցների կիրառմանը: Ուստի, ԱՄՆ մասամբ ընտրեց նման մոտեցում ցուցաբերել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջոցով, որը թիվ 1267 բանաձևով 1999 թվականի նոյեմբերի

14-ից սահմանեց VII գլխի պատժամիջոցները տալիբների դեմ, որոնք հետագայում խստացվեցին 2000 թվականի դեկտեմբերի 19-ի 1333 բանաձևով [14]:

Տալիբանի ծայրահեղական դառնալու գլխավոր ցուցիչը եղավ 1999 թվականի հուլիսին Քվետայում Աֆղանստանի Պոպայզայ ցեղի առաջնորդ Աբդուլ Ահադ Քարզայի սպանությունը՝ Վաշինգտոնի կողմից տալիբների դեմ միակողմանի պատժամիջոցներ սահմանելուց ընդամենը վեց օր անց: Քարզայների ընտանիքը Չահիր շահի կողմնակից Փուշթուն ընտանիքներից մեկն էր, որը կապված էր Տալիբան շարժման հետ: Այս փուլումները որոշակի շահեր ունեին, որպեսզի աջակցեն Վաշինգտոնի կողմից տալիբներին ճանաչմանը, սակայն հաշվի առնելով, որ տալիբների պակիստանցի աջակիցները ցանկություն չունեին վերակենդանացնելու Աֆղանստանի հնագույն ռեժիմը (որը նրանք կապում էին Փուշթունստանի վեճի հետ), երկարաժամկետ հեռանկարում նրանք անհուսալի դաշնակիցներ էին տալիբների համար: Կարզայի սպանությունը զգալի ճեղքվածք առաջացրեց տալիբների ներսում, որը իր տրամաբանական ավարտը ունեցավ 2001 թ.-ի սեպտեմբերին:

Աֆղանստանի բնակչության համար սեպտեմբերյան ճգնաժամը սկսվեց ոչ թե Առևտրի համաշխարհային կենտրոնի և Պենտագոնի վրա հարձակումներով, այլ այդ իրադարձություններից ընդամենը երկու օր առաջ, երբ սեպտեմբերի 9-ի կեսօրին երկու մարոկկացի լրագրողներ, որոնք կրում էին բելգիական անձնագրեր, պայթեցրին տեսախցիկի մեջ թաքցրած ռումբը և մահացու վիրավորեցին տալիբների դեմ պայքարող ուժերի հրամանատար, հայտնի Ահմադ Շահ Մասուդին: Նմանատիպ մահապարտ հարձակումը նախադեպը չունեւր աֆղանական շրջանակներում, ավելի շուտ, այն նման էր այն գործելակերպին, որը ասոցացվում էր հիմնականում Ուսամա բեն Լադենի հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրեթե անհնար է պատկերացնել, որ տալիբների ղեկավարությունը տեղեկացված չլինեւր Բեն Լադենի կողմից մահափորձի իրականացման մասին իրենց հիմնական հակառակորդի դեմ, ապա հարձակումը ընդգծեց տալիբների արմատականացումը, որը մի քանի տարի շարունակ ավելի ու ավելի շոշափելի էր դառնում:

2001 թ.-ի սկզբի դրությամբ Տալիբանի ռեժիմը ԱՄՆ-ի և միջազգային հանրության հետ հարաբերությունները անկման մեջ էր՝ մարդու իրավունքների մշտական խախտումների, Բամի-սանի կանոնադրության խնդրի և Ուսամա Բին Լադենին ԱՄՆ իշխանություններին հանձնելու մերժման պատճառով, ով հանդիսանում էր 1998 թվականի օգոստոսին Քենիայում և Տանզանիայում ԱՄՆ դեսպանատների հարձակումների

դարի վերջին, մինչև 20-րդ դարը և մինչև 21-րդ դարի սկիզբը: Նրա կենտրոնակայանը գտնվում էր Էլ Սեգուն-դոյում, Կալիֆորնիա, ԱՄՆ:

գլխավոր կասկածյալը: Տալիբների հաղթանակների նկատմամբ ԱՄՆ-ի սկզբնական դիրքորոշումը հիմնված էր այն լավատեսության վրա, որ վերջապես ուժը կարող է խաղաղություն և կայունություն հաստատել Աֆղանստանում: ԱՄՆ-ի սկզբնական մոտեցումը պայմանավորված էր նաև ԱՄՆ-ի և արևմտյան նավթային ընկերությունների հեռանկարային դերով՝ ամրապնդելու Կենտրոնական Ասիայի պետությունների նավթի և գազի պաշարների նկատմամբ իրենց առևտրային շահերը: Հիմնական խնդիրը, որին բախվեցին Bidas, Delta և UNOCAL ընկերությունները, Աֆղանստանով էներգատեսուրսների անվտանգ տեղափոխումն էր: Քարուլի անցումը Տալիբանի ձեռքը դիտվում էր ԱՄՆ քաղաքականությունը մշակողների կողմից որպես UNOCAL-ի և Delta-ի համար առևտրային շահերը առավելագույնս խթանելու հնարավորություն: Շուտով այս դրական պատկերացումները անհետացան, երբ լրատվամիջոցներում հրապարակվեցին աֆղան կանանց նկատմամբ դաժան վերաբերմունքի և խլամի նրանց խիստ մեկնաբանության մասին լուրերով: Ուստի, այս ամենի արդյունքը պիտի հանդիսանար այն շեշտակի փոփոխությունները ԱՄՆ քաղաքականության առաջնահերթություններում, երբ նրանք մեղադրեցին տալիբներին ահաբեկիչներին ապաստարան տրամադրելու և Աֆղանստանում նրանց ճամբարները հովանավորելու համար:

Ի վերջո, պայմանավորված ահաբեկչական խմբերի Աֆղանստանում գտնվելու հանգամանքով, ԱՄՆ-ն անցավ ռազմական գործողությունների իրականացմանը: 1998 թվականի օգոստոսի 20-ին ռազմական ուժերը հարձակվեցին Խոստի, Ղազնիի և Ջալաբադի վրա՝ ավերելու ահաբեկիչների ճամբարները: ԱՄՆ պաշտոնյաները սկսեցին ճնշում գործադրել նաև Պակիստանի և Մաուդյան Արաբիայի կառավարությունների վրա՝ ազդելու տալիբների վրա՝ Ուսամա բեն Լադենին հանձնելու համար: UNOCAL-ը նույնպես հետ կանգնեց գազատարի նախագծից: Նախագահ Բլինդթոնը 2000 թվականի մարտին այցելեց Հարավային Ասիա, որտեղ նա արտահայտեց ԱՄՆ-ի մտահոգությունը Աֆղանստանի ժողովրդի ծանր վիճակի և մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ [15]:

Այսպիսով, այս ամենի տրամաբանական ավարտը կամ տալիբանյան իշխանության հեռացման սկիզբը հանդիսացավ 2001 թ. սեպտեմբերի 11-ը, երբ ԱՄՆ հարձակման ենթարկվեց անտեսանելի թշնամու կողմից, որը կարճ ժամանակում դարձավ տեսանելի, երբ ԱՄՆ հետախուզական ծառայությունները բացահայտեցին հարձակվողներին կապը Ուսամա բեն Լադենի և ալ-Կաիդա կազմակերպության հետ: Արդյունքում, ԱՄՆ Սենատն անմիջապես և

միաձայն լիազորեց նախագահ Բուշին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները պայքարելու գոբալ ահաբեկչության դեմ: Նախորդ իրադարձությունների հետևանքով Տալիբանի կողմից Ուսամա բեն Լադենին հանձնելու ԱՄՆ-ի պահանջներին մերժման հիմնավորմամբ 2001 թվականի հոկտեմբերի 7-ին բրիտանական և ամերիկյան ուժերը լայնամասշտաբ հարձակում սկսեցին Աֆղանստանի վրա: Ինչի արդյունքը հանդիսացավ 2001 թվականի դեկտեմբերի սկզբին Բոննում Աֆղանստանի առաջնորդների խորհուրդի կողմից Համիդին Քարզային որպես Աֆղանստանի նոր ժամանակավոր կառավարության ղեկավարի նշանակումը, որով ավարտվեց տալիբների քառամյա դաժան և արյունալի կառավարման շրջանը Աֆղանստանում [16, էջեր 290-295]:

Այսպիսով, ամփոփելով տալիբանյան իշխանության տիրապետման քառամյա շրջանը Աֆղանստանում, կարելի է եզրակացնել հետևյալը, նախ տալիբանյան ուժերի կողմից իշխանության գալը այդքան էլ շոկային չընկալվեց ամերիկյան իշխանությունների համար, քանզի առևտրային դիտանկյունից Աֆղանստանը կարևոր այլընտրանք էր նավթի արդյունահանման և տեղափոխման համար: Ուստի, ԱՄՆ շահերի դիտանկյունից նորմալ էր դիտարկվում տալիբանյան ռեժիմի տիրապետումը Աֆղանստանում, առավել ևս նրանք այն փուլերում էին, որոնց ողջ քաղաքացիական պատերազմի ընթացքում աջակցություն էին ցուցաբերում ամերիկացիները թե ֆինանսական և թե ռազմական առումով: Իրավիճակը կտրուկ փոխվեց միայն այն ժամանակ, երբ միջազգային ահաբեկչությունը սպառնալիք հանդիսացավ Միացյալ Նահանգների համար, ավելին այն սպաստան գտավ Աֆղանստանում: Ուստի պատահական չէր, որ ԱՄՆ-ի գործողությունները դարձան ծայրաստիճան ազդեցիկ հատկապես այն ահաբեկչական գործողություններով պայմանավորված, որոնք տեղի ունեցան 1990-ական թթ. վերջին, իսկ արդեն սեպտեմբեր 11-ի տեղի ունեցած հարձակումները ուղղակիորեն ստիպեցին քայլեր ձեռնարկել հեռացնելու Տալիբանին իշխանությունից, ինչպես նաև ոչնչացնել ալ-Կաիդաի հիմնական ճամբարները Աֆղանստանում, որի արդյունքը եղավ ԱՄՆ և կոալիցիոն ուժերի ռազմական ներխուժումը Աֆղանստան և նոր ժամանակավոր կառավարության ձևավորումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Bajoria J.**, “The Taliban in Afghanistan”, 2011. <https://www.cfr.org/backgrounder/taliban-afghanistan> (դիտման ամսաթիվը՝ 31.07.2024).
2. **Zachary L.**, “The Taliban in Afghanistan”, Council on Foreign Relations., 2014.

3. **Fida B., Ruqia R., Hussan Ara M., Rubeena B.**, “The Rise of the Afghan Taliban” // “Balochistan Review” ISSN 1810-2174 Balochistan Study Centre, University of Balochistan, Quetta (Pakistan) VOL. XL NO. 1, 2019. p. 340-345.
4. **Matinuddin K.**, “The Taliban Phenomenon: Afghanistan” 1994-1997. Karachi: Oxford University Press, 1999.
5. **Elias-Sanborn B.**, 2012. The Central Intelligence Agency's 9/11 File. <http://www.gwu.edu/~nsarchiv/NSAEBB/NSAEBB381/> (նիստման ամսաթիվը՝ 07.07.2024).
6. The 9/11 Commission Report.
7. **Shrestha R.**, “Taliban Brutality and Death of Mohammad Najibullah in 1996”, *The News Insight*, 19 Aug 2021, <https://enewsinsight.com/taliban-brutality-and-death-of-mohammad-najibullah-in-1996/> (նիստման ամսաթիվը՝ 25.06.2024).
8. **Sarah H.**, 'Kabul falls under the Islamic lash', *The Sunday Times*, 29 September 1996.
9. **Rashid A.**, “Taliban: Oil, Islam and the New Great Game in Central Asia”. London: I.B. Tauris, 2000.
10. *The Voice of America*, 27 September 1996, <http://www.hri.org/news/usa/voa/1995/95-09-27.voa.html> (նիստման ամսաթիվը՝ 20.05.2024).
11. **Dennis K.**, “The United States and Pakistan 1947-2000: Disenchanted Allies” (Baltimore: The Johns Hopkins University Press, 2001).
12. **Hrayr Dekmejian R.**, 'The Rise of Political Islamism in Saudi Arabia' // *The Middle East Journal*, vol. 48, no.4, 1994, pp.627-643.
13. **Lancaster J.**, 'Afghanistan Rulers Accused of Giving Terrorist Refuge: Clinton Bans Trading with Taliban Militia', *The Washington Post*, 7 July 1999, p.A15.
14. Security Council resolutions 1267 (1999) and 1333 (2000) on Afghanistan (New York: United Nations, S/2001/695, July 13, 2001) para. 67.
15. **Fatima Q.**, “The Rise and Fall of Taliban Regime (1994-2001) In Afghanistan: The Internal Dynamics”, *IOSR Journal of Humanities and Social Science*, 2013, p. 44.
16. **Tanner S.**, “Afghanistan: A Military History from Alexander the Great to the fall of the Taliban”, edition Karachi: Oxford University Press, 2003.

Տճանաչանք/հաստատում է՝ 31.07.2024

Рецензирована/Գրախոսում է՝ 02.08.2024

Принята/Ընդունում է՝ 14.08.2024